ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ
ՀՀ ՊՆ աշխատակազմի վերահսկիչ վարչության պետի տեղակալ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱՐՄԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ՌԱԶՄԱԿԱՆ-ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿԿՈՂՄ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները ունեն ռազմավարական բնույթ: Այդ գործակցությունն առանձնանում է Հայաստանի ազգային անվտանգության համակարգի ձևավորման և գործառման հարցում իր ունեցած դերով ու նշանակությամբ: Հայաստանի և Ռուսաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր անցած ժամանակաշրջանում իրականացվել են բազմաթիվ ու բազմապիսի միջոցառումներ՝ ուղղված կենսագործունեության բոլոր որոլտներում փոխշահավետ համագործակցության հետևողական զարգացմանը, միանշանակ ներառելով նաև ռազմական և ռազմատեխնիկական ուղղությունները: Հայ-ռուսական ռազմական փոխգործակցությունը բխում է երկու երկրների երկարաժամկետ ռազմավարական շահերից և արդի փուլում հասել է բավականին բարձր մակարդակի՝ հիմքում ունենալով անընդհատ ու դինամիկ զարգացման տեսլական: Հայաստանը հետևողակ է զարգացնելու հարաբերությունները Ռուսաստանի հետ համատեղ անվտանգության ոլորտներում, հատկապես՝ ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի, Հակաօդային պաշտպանության համատեղ համակարգի, սահմանների համատեղ պաշտպանության ծրագրերի շրջանակներում:

Հանգուցային բառեր՝ Հարավային Կովկաս, երկկողմ գործակցություն, պաշտպանություն, անվտանգություն, զինված ուժեր, սպառազինություն, համաձայնագիր:

Հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցությունը և Հայաստանի ռազմական անվտանգության ապահովումը բխում է Հայաստանի ու Ռուսաստանի երկարատև ռազմավարական փոխգործակցության շահերից, քանզի Հայաստանի՝ որպես ռազմավարական գործընկերոջ կարևորությունը Ռուսաստանի համար արտահայտվում է ոչ միայն Անդրկովկասում ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդման անհրաժեշտությամբ, այլև Մերձավոր Արևելքում ազդեցության և ռազմավարական հնարավորությունների պահպանման առավելությամբ, նպաստավոր դաշտ է ստեղծում Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական հակառակորդների ազդեցության ու թշնամական գաղափարախոսությունների (պանթուրքիզմ, պանիսլամիզմ և այլն) ներթափանցման կանխարգելման համար: Հարավկովկասյան տարածաշրջանը Ռուսաստանի համար կարևորվում է նաև այն առումով, որ որոշակիորեն իր մասով կարող է ազդել Ռուսաստանի ազգային անվտանգության վիճակի վրա: Վերջին տարիների զարգացումների ընթացքը շատ հստակ ցույց տվեց այդ տարածաշրջանի կարևորությունը և կանխորոշեց Ռուսաստանի ուշադրության մակարդակն ու մասնակցությունը այս տարածաշրջանի կյանքում:

Հայ-ռուսական ռազմաքաղաքական

համագործակցությունը ակտիվորեն իրականացվում է ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ ՀԱՊԿ շրջանակներում: Հայ-ռուսական ռազմական ոլորտի շփումները իրականացվում են ՀՀ և ՌԴ պաշտպանության նախարարությունների միջև երկկողմ համագործակցության նախապես հաստատված տարեկան պլանների հիման վրա, ինչպես նաև արտապլանային տարբերակով ձեռք բերվող պայմանավորվածությունների շրջանակներում: Տարածաշրջանում մրցակցության ակտիվացմանը, անջատողականության աշխուժացմանը զուգընթաց՝ Ռուսաստանը հետևողական քայլեր է ձեռնարկում Հարավային Կովկասում իր դիրքերը ամրապնդելու ուղղությամբ, ինչի պարագայում ավելի է ընդգծվում հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցության նշանակությունը երկու երկրների անվտանգության համար՝ իհարկե, առանձնացնելով այդ երկրների ընդհանուր անվտանգային քաղաքականության մասշտաբները և դրա իրագործմանն ուղղված հայեցակարգերի զարգացման տեսլականները: Երկու երկրների մասնակցությունը համատեղ անվտանգության ծրագրերին, ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության մի շարք երկկողմ պայմանագրերի առկայությունը հիմնավորում են այն փաստը, որ բավականին բարձր է այդ երկրների փոխադարձ վստահության աստիճանը անվտանգության երաշխավորման կարևորագույն ուղղություններում գործակցության առումով:

Որպես անցած տարիների երկկողմ արդյունավետ գործակցության արդյունք կարելի է փաստել առավել քան 250 միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական համաձայնագրերի ու պայմանավորվածությունների փաստաթղթային արձանագրումները [1], որոնց շարքում առանձնանում են պաշտպանական-անվտանգային կառուցակարգերին վերաբերող փաստաթղթերը: 1990-ական թվականների սկզբին, երբ նախկին խորհրդային հանրապետությունները միանգամից անկախացան, դրանց մեծամասնության համար ամենակենսականը դարձան ազգային անվտանգության ապահովման, նաև արդեն բռնկված բախումների կարգավորման հարցերը: Հայաստանի և Ռուսաստանի միջև անվտանգության փոխապահովման, սպառնալիքների չեզոքացման, ռազմական օգնության ցուցաբերման ու համատեղ պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունները սահմանված են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության ու փոխադարձ օգնության՝ 1997 թվականի օգոստոսի 29-ին կնքված պայմանագրի [2], 1995թ. մարտի 16-ին կնքված՝ Հայաստանում 25 տարի ժամկետով ռուսաստանյան ռազմաբազա ստեղծելու մասին պայմանագրի [3] (բազան ստեղծվել է 1994թ. սեպտեմբերի 1-ին Անդրկովկասյան ռազմական օկրուգի 127-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հիման վրա) և 2000թ. սեպտեմբերի 27-ին կնքված՝ Համատեղ անվտանգության ապահովման շահերից բխող զինված ուժերի կիրառման համատեղ պլանավորման հարցերի շուրջ համաձայնագրի դրույթներով (խմբավորման 15 տարիների գործունեությունից հետո 14.11.2016թ. ամրագրում ստացավ խմբավորման իրավաքաղաքական կարգավիճակը [4]): Այդպիսով, հայ-ռուսական ռազմավարական գործակցությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ազգային, և առավելապես, պաշտպանական-անվտանգային ապահովման համակարգի բաղկացուցիչ մասը:

2011թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից Մոսկվա կատարված այցի շրջանակներում ռազմական-ռազմավարական առումով կարևորվեցին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության

միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին՝ 1995 թվականի մարտի 16-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության վավերացումն ու դրա ուժի մեջ մտնելը, ինչի արդյունքում Հայաստանի տարածքում տեղակայված ՌԴ ռազմակայանը շարունակելու է իրականացնել գործառույթները մինչև 2044 թվականը [5]: ՌԴ ռազմակայանի երկար ժամկետով Հայաստանի տարածքում տեղակայման հնարավորությունները քննարկվել ու այդ առումով իրատեսական պայմանավորվածություններ էին ձեռք բերվել Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդևի 2010 թվականի օգոստոսին Երևան կատարած այցի ժամանակ [6], որի արդյունքում նշված պայմանավորվածությունը քաղաքական շրջանակներում լայն քննարկումների արժանացավ: Բացի այդ, ընդլայնվեցին բազայի աշխարհագրական և ռազմավարական պատասխանատվության ոլորտը (եթե մինչ այդ բազայի գործառույթները սահմանափակվում էին նախկին Խորհրդային Միության արտաքին սահմաններով, ապա արձանագրության ստորագրումից հետո այդ սահմանափակումը համաձայնագրի տեքստից հանվեց), ինչպես նաև ռուսական կողմը Հայաստանի ռազմական անվտանգությունը համատեղ ապահովելու ու հայկական զինուժն արդիական զինատեսակներով սպառազինմանը սատարելու պարտավորություն ստանձնեց:

Միաժամանակ, դրական արձագանքներին զուգահեռ հայաստանյան զանգվածային լրատվության միջոցներում կարելի է հանդիպել նաև բացասական կարծիքների, համաձայն որոնց այդ պայմանագիրը ոչ միայն չի համընկնում Հայաստանի ազգային շահերին, այլև զգալիորեն սահմանափակում է ՀՀ ինքնիշխանությունը: Միանշանակ չի կարելի գնահատել հայ-ռուսական պայմանագրի լուսաբանումը նաև ռուսաստանյան տեղեկատվական դաշտում: Ռուսական ԶԼՄ-ները ռազմավարական դաշնակցի հետ հարաբերություններին նվիրված մեկնաբանություններում ավելի քան զուսպ էին [7]:

Հայաստանում հայ-ռուսական հարաբերությունների շուրջ շարունակաբար ընթացող քննարկումներում շատ է շահարկվում այն թեզը, թե «ռուսական կողմնորոշումը» և մասնավորապես 102-րդ ռազմակայանի ներկայությունը սահմանափակում են ՀՀ ինքնիշխանությունը: Այդ առիթով նկատենք, որ օտարերկրյա ռազմակայանների առկայությունը տարբեր երկրներում, որպես կանոն, ենթադրում է երկուստեք շահեր: Որպես այդպիսին՝ ՀՀ տարածքում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայանի հիմնական նպատակը Հայաստանի ռազմական անվտանգության ապահովումն է Թուրքիայի հնարավոր ագրեսիայից: Հայ-ռուսական հարաբերությունների շուրջ ընթացող բանավեճերում հաճախ կարելի է լսել, թե Ռուսաստանի ռազմական ներկայությունը չի ապահովում ԼՂՀ անվտանգությունն Ադրբեջանի հետ հնարավոր պատերազմում: Անշուշտ, քաղաքական-իրավական տեսանկյունից Արցախյան հակամարտության կարգավորումը ՀՀ-ՌԴ պայմանագրերի հետ առնչություն չունի, և 102-րդ ռազմակայանն իրավասու չէ միջամտելու ԼՂՀ-Ադրբեջան դիմակայությանը: Սակայն, փաստացի մոտեցումների պարագայում պետք է հաշվի առնել նաև այն, որ ռուսական ռազմակայանի վերաբերյալ պայմանագիրն ունի ռազմավարական նշանակություն և նման պայմանագրի առկայությունն արդեն իսկ նվազեցնում է պատերազմի հավանականությունը Արցախի դեմ: Այդ հանգամանքը լավագույնս ըմբռնել են Բաքվում, որտեղ հայտարարում են, թե Մինսկի խմբի անդամ երկրի նախագահի կողմից կնքված պայմանագիրը չափազանց մեծ առավելություններ է տալիս Հայաստանին, և որ նման քայլը վկայում է Ռուսաստանի կողմնակալ

դիրքորոշման մասին[8]:

Հայ-ռուսական ռազմավարական համագործակցության առաջնային ուղղություններից է նաև ռազմատեխնիկական բնագավառը, որտեղ հարաբերությունների հիմնարար բնույթն էլ ավելի է ընդգծված: Այսօր հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցությունը Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հուսալի միջազգային երաշխիքներից կարելի է համարել, քանզի ՀՀ զինված ուժերում առկա սպառազինության ու ռազմական տեխնիկայի նշանակալի հատվածը ռուսական արտադրության է: Այստեղ կարևոր է առանձնացնել, որ ներկայումս ռազմատեխնիկական համագործակցության իրագործվող ձևաչափում նախատեսված են ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումներ անհայտույց կամ արտոնյալ գներով, այսինքն՝ կամ հաստատագրված և համապատասխան համաձայնագրերով ֆիքսված գներով, կամ էլ սեփական զինված ուժերի համար սահմանված պայմաններով: Այս հնարավորությունը կարևորվում է ՀՀ զինված ուժերի սպառազինության թարմացման ու արդիականացման խնդիրների կարգավորման գործընթացում:

Երկկողմ ռազմատեխնիկական գործակցությունը զարգանում է 3 հիմնական ուղղություններով. ռազմատեխնիկական աջակցություն, փոխգործակցությունը հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի գործունեության շրջանակներում և պետական արտահանման վարկերի տրամադրում: Այսպես, Հայաստանին տրամադրվող ռազմատեխնիկական աջակցությունը իրականացվում է 2003թ. հունվարի 17-ի ռազմատեխնիկական համագործակցության մասին միջկառավարական համաձայնագրին համապատասխան: Համաձայնանգրով հնարավորություն է ստեղծվել իրականացնել ռազմական նշանակության և պաշտպանության ու անվտանգության կարիքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների փոխադարձ մատակարարումներ, մատուցել ռազմատեխնիկական նշանակության ծառայություններ, զարգացնել ռազմական նշանակության արտադրանքի մշակման ու թողարկման հետ կապված ունեցած ձեռքբերումները, ինչպես նաև միմյանց ցուցաբերել ռազմատեխնիկական աջակցություն: Համաձայնագրի կնքումից շուրջ տաս տարի անց, զարգացնելով նշված պայմանավորվածության դրույթները՝ այն միջկառավարական մակարդակից բարձրացվեց միջպետական մակարդակի և կնքվեց Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագիրը: Այդ նոր փաստաթղթով նախատեսվեց, որ երկու երկրների ռազմական նշանակության արտադրանքի փոխանցումը մի երկրի տարածքից մյուսին իրականացվելու է ոչ թե հատուկ վավերագրերի կամ որոշումների ընդունման, այլև կողմերի լիազոր մարմինների կողմից տրվող դուրսգրման փաստաթղթերի միջոցով: Այսինքն՝ ռազմական նշանակության արտադրանքի, սպառազինության ու ռազմական տեխնիկայի հայաստանյան գնորդը կարող է արտադրանքը գնելու բանակցությունները վարել անմիջապես ռուսաստանյան արտադրող ընկերության հետ ու հետևաբար գնումը կատարել անմիջապես արտադրողից, ավելի էժան գներով ու առանց միջնորդի: Նույնը վերաբերում է նաև ռուսաստանյան գնորդներին [9]:

Ռազմատեխնիկական համագործակցության հարցերով հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի գործունեության հետ կապված հարկ է նշել, որ հանձնաժողովը ստեղծվել է այդ ոլորտի գործակցությանն առնչվող խնդիրների արագ և արդյունավետ կանոնակարգման նպատակով և հատկապես

վերջին շրջանում բավականին ակտիվ գործունեություն է ծավալել: Ռուսական սպառազինության մատակարարման արդիական հարցերը, ինչպես նաև ռուսական և հայկական ձեռնարկությունների պաշտպանական-արդյունաբերական համալիրների միջև համագործակցության զարգացումը պարբերաբար ուսումնասիրվում է միջկառավարական հանձնաժողովի կողմից [10]: Մասնավորապես, հանձնաժողովի կողմից պարբերաբար քննարկվում են ՀՀ զինված ուժերի մինչև 2020թ. զարգացման պլանի հետ անմիջականորեն կապված և հայ-ռուսական ռազմական համագործակցության շրջանակներում դիտարկվող փաստացի բոլոր խնդրահարույց հարցերը: Ներկա դրությամբ կայացել են հանձնաժողովի արդեն իսկ թվով 11 աշխատանքային ծավալուն նիստեր, որոնց ընթացքում միջոցառումներ են անցկացվել՝ ուղղված ՀՀ պաշտպանության նախարարության և Ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության միջև կնքված փոխըմբռնման հուշագրի դրույթների իրագործմանը [11]: Որպես այս գործակցության հիմնական նպատակ կարելի է առանձնացնել գործակցությունը Հայաստանի տարածքում սպառազինության ու ռազմական տեխնիկայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման համատեղ կազմակերպությունների ու մասնագիտացված ծառայությունների կենտրոնների ստեղծման ուղղությամբ (ռուսական արտադրության ծանր հրետանային տեխնիկայի և դրանց շարժիչների նորոգում, հակաօդային պաշտպանության միջոցների, ՄԻ տեսակի ուղաթիռների, ինչպես նաև ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենաների համալիր սպասարկման ծառայություններ և այլն): Կարևոր առաջընթացի արձանագրում էր նաև այն, որ 2013թ. հոկտեմբերին Երևանում «Կամազ» ընկերությունների խումբը բացեց առևտրի և սպասարկման կենտրոն՝ հիմնականում նպատակ հետապնդելով սպասարկել ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական և կրկնակի նշանակության տեխնիկան, որը կառուցված է «Կամազ» մակնիշի տրանսպորտային միջոցների հիմքի վրա [12]: Իսկ ավելի ուշ՝ 2016թ. հոկտեմբերին, Երևանում ռուսական ռազմատեխնիկայի լավագույն նմուշների ցուցադրության համար լավ հնարավորություն դարձավ Սպառազինությունների և պաշտպանական տեխնոլոգիաների ArmHiTec-2016 առաջին միջազգային ցուցահանդեսը [13]:

Ինչ վերաբերում է պետական արտահանման վարկերի տրամադրման հարցին, ապա այդ մոտեցումը կիրառվում է վերոնշյալ միջկառավարական համաձայնագրի դրույթներին համապատասխան, և այդ գործընթացում արդեն իսկ ներգրավված են ՌԴ ռազմարդյունաբերական համալիրի շուրջ 25 հիմնարար դերակատարություն ունեցող կազմակերպություններ: Հայկական կողմի համար նշանակալի է նաև այն արտոնությունը, որ պետական վարկավորման շրջանակներում ռազմական նշանակության արտադրանքը տրամադրվում է ռուսական ներքին, ազգային սպառման գնային քաղաքականության համարժեք, ինչը հանդիսանում է նաև 2013թ. ՀՀ և ՌԴ նախագահների կողմից հաստատված Հայաստանին ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու մասին երկարաժամկետ ծրագրին [14] համապատասխան (կարելի է նաև հետևություն անել, որ ռուսական կողմը նման մարտավարությամբ փորձում է պահպանել տարածաշրջանում առկա ուժերի հավասարակշռությունը՝ ի համեմատ Ադրբեջանի հետ ռազմական նշանակության մի շարք ապրանքատեսակներ վաճառելուն):

Ամփոփելով անցած տարիների զարգացումները՝ կարելի է ընդհանրացնել, որ հայ-ռուսական ռազմավարական համագործակցության համակարգում առանցքային դեր ունի ռազմական բնա-

գավառը: Հայաստանը Ռուսաստանի հետ ռազմական համագործակցությունը և հատկապես ՀՀ տարածքում ռուսաստանյան զորակայանի ներկայությունը դիտում է որպես արտաքին ռազմական սպառնալիքների չեզոքացման կարևոր գործոններից մեկը: Հայաստանում ՀՕՊ-ի բնագավառում հայ-ռուսական համատեղ հերթապահությունը էապես նպաստում է Հայաստանի Հանրապետության անվտանգության կարևորագույն խնդիրներից մեկի լուծմանը, իսկ հայ-ռուսական ռազմական դաշինքը նպաստում է տարածաշրջանում և առհասարակ՝ միջազգային հարաբերություններում ռազմաքաղաքական հավասարակշռության պահպանմանը: Հայաստանի շահերի տեսանկյունից այդ համագործակցությունն ուղղված է հիմնարար խնդիրների լուծմանը, այն է՝ ՀՀ զինված ուժերի ռազմական և ռազմատեխնիկական կարիքների ապահովումը, ինչպես նաև Հարավկովկասյան տարածաշրջանում ուժերի հարաբերական հաշվեկշռի պահպանումը:

Միաժամանակ, Հայաստանի կողմից հռչակված փոխլրացման սկզբունքին համահունչ, պետք է հաշվի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ Ռուսաստանի հետ ռազմական գործակցության համատեքստում Հայաստանը պետք է մշտապես պատրաստ լինի շրջադարձային զարգացումներին և այլընտրանքային լուծումներին, քանզի արձանագրվել են նաև որոշ իրողություններ՝ կապված Ռուսաստանի ոչ «անմնացորդ» վարքագծով բարեկամության դրսևորումների հետ (որպես օրինակ կարելի է նշել վերջինիս կողմից ռազմամթերքի և սպառազինության վաճառքը Ադրբեջանին և դրան վերաբերող զուտ առևտրային նշանակության հիմնավորումներն ու պաշտոնական մեկնաբանությունները):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Արտաքին քաղաքականություն, Երկկողմ հարաբերություններ-Ռուսաստան, թարմացված 16.12.2016թ., http://www.mfa.am/hy/country-by-country/ru/
2. Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18532
3. Պարզաբանում. Հայաստանում ՌԴ ռազմաբազա, 04.02.2015թ., http://www.mediamax.am/am/news/parzabanum/13078/
4. Ըստ համաձայնագրի՝ Միացյալ զորախմբի ձևավորումը պայմանավորված է Կովկասյան տարածաշրջանում անվտանգության ապահովման նկատառումներով գործողությունների համաձայնեցման անհրաժեշտությամբ: Համաձայնագիրը ենթադրում է ՀՀ և ՌԴ Համատեղ զորախմբի կողմից կողմերից որևէ մեկի նկատմամբ սպառնալիքի (ռազմական հարձակում, ագրեսիա) առկայության պայմաններում համարժեք գործողությունների իրականացում: Աղբյուրը տես ՀՀ և ՌԴ զինված ուժերի միավորված խմբավորման մասին համաձայնագիր. տեղեկանք, 17.11.2016թ., http://armedia.am/arm/news/42165/hh-ev-rd-zinvats-uzheri-miavorvats-khmbavorman-masin-hamadzaynagir-texekanq.html
5. Մոսկվայում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի հետ, 24.10.2011, http://www.president.am/hy/press-release/item/2011/10/24/news-1874/
6. ՌԴ նախագահ Դ.Մեդվեդևի՝ Հայաստան կատարած պետական այցի արդյունքներով հայ-ռուսական համատեղ հայտարարություն է արվել, 20.08.2010թ., https://armenpress.am/arm/news/616916/rd-nakhagah-dmedvedevi-hayastan-katarats-petakan-ayci-ardyunqnerov.html
7. Հարությունյան Գ., Հայ-ռուսական հարաբերությունների արդի փուլը // «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական հանդես, թիվ 6, 2010, էջ 3-4
8. Քոչարյան Տ.Տ., ՀՀ ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 302

9. ՌԴ Դաշնային խորհուրդը հաստատեց հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության պայմանագիրը, 25.06.2013թ., http://razm.info/47036
10. Կշարունակենք ջանքերը՝ ԼՂ հարցում կողմերի դիրքորոշումները մերձեցնելու ուղղությամբ. Իվան Վոլինկին, 10.02.2017թ., http://www.aravot.am/2017/02/10/854491/
11. Мнацаканян А., Геополитическая роль Армении в контексте интересов Российской Федерации на Южном Кавказе, 28.09.2013, http://tta.am/геополитическая-роль-армении-в-контексте-интересов-российской-федерации-на-южном-кавказе/2013/09/28
12. ԿԱՄԱԶ-ի Երևանում բացված սպասարկման կետրոնը կկատարի ՊՆ և մասնավոր հատվածի պատվերներ, 04.10.2013թ., https://armenpress.am/arm/news/735509/noviyiy-centr-obsluzhivaniya-kamaz-v-erevane-budet-osushchestvlyat.html
13. Միջոցառումը կոչված է աջակցել Հայաստանի Զինված ուժերի, անվտանգության մարմինների և իրավապահ մարմինների արդիականացմանը և տեխնիկական վերազինմանը, դրանց մարտունակության և արդյունավետ գործունեության բարձրացմանը, ժամանակակից միջազգային ռազմա-տեխնիկական մշակումների ձեռքբերումների ուսումնասիրմանը: Աղբյուրը տես Երևանում բացվել է «ArmHiTec-2016» առաջին միջազգային ցուցահանդեսը, 13.10.2016թ., http://newsarmenia.am/am/news/analytics/-armhitec-2016-Yerevan-/
14. Ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագրով լայն հնարավորություններ ստեղծվեցին հայկական կողմի համար՝ Ռուսաստանի պաշտպանական ձեռնարկություններում ներքին գներով սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման համար: Լրացուցիչ տես ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի մամուլի ասուլիսը բանակցությունների արդյունքների վերաբերյալ, 02.12.2013թ., http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2013/12/02/president-serzh-sargsyan-press-conference-with-the-president-of-russian-federation/

ВОЕННО-СТРАТЕГИЧЕСКОЕ ДВУСТОРОННЕЕ СОТРУДНИЧЕСТВО МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЕЙ И РОССИЙКОЙ ФЕДЕРАЦИЕЙ

ТИГРАН КОЧАРЯН

Заместитель начальника контрольного управления аппарата министерства обороны РА, доктор политических наук, профессор

АРМЕН АГАБАБЯН

Аспирант Института философии, социологии и права

Отношения Республики Армения с Российской Федерацией носят стратегический характер. Это партнерство выделяется своей ролью и значением в становлении и функционировании системы национальной безопасности Армении. С момента установления дипломатических отношений между Россией и Арменией реализованы многочисленные и разнообразные мероприятия, направленные на непрерывное развитие взаимовыгодного сотрудничества во всех сферах жизнедеятельности, включая также военные и военно-технические направления. Армяно-российское военное сотрудничество вытекает из стратегических интересов двух стран, и на современном этапе достигло довольно высокого уровня, имея в основе видение постоянного и динамичного развития этих отношений. Армения последовательна в развитии отношений с Россией в сфере совместной безопасности, особенно в рамках программ СНГ, ОДКБ, Объединенной системы ПВО и совместной охраны границ.

MILITARY-STRATEGIC BILATERAL COOPERATION BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE RUSSIAN FEDERATION

TIGRAN KOCHARYAN

Deputy Head of the Control Department of the Ministry of Defense of the Republic of Armenia, Doctor of Political Sciences, Professor

ARMEN AGHABABYAN

PhD student at the Philosophy, Sociology and Law Institute of the National Academy of Sciences of the Republic of Armenia

The relations between the Republic of Armenia and the Russian Federation are of a strategic nature. This partnership stands out for its role and importance in the establishment and functioning of the Armenian national security system. Since the establishment of diplomatic relations between Russia and Armenia, numerous and varied events have been implemented, aimed at the continuous development of mutually beneficial cooperation in all spheres of life, including also military and military-technical directions. Armenian-Russian military cooperation follows from the strategic interests of the two countries, and at the present stage has reached a rather high level, having as a basis the vision of the constant and dynamic development of these relations. Armenia is consistent in developing relations with Russia in the field of joint security, especially within the framework of the programs of the CIS, the CSTO, the Joint Air Defense System and the Joint Border Protection.